

ՏԱՍՆԵՐՈՐԿ ՏԱՐԻ

ՄԱՅԻՍ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարեկանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպեկով:
Թիֆլիսում գրվում են միայնակ անդամները մեջ:
Ուստարապարագիր սխմում են ողակի
Тифлис. Редакция «Маяк»

Խմբագրատունը բաց է առաջօրե 10—2 ժամ
(բացի կիրակի և տոն օրերից)
Յայտարարումները ընդունվում է ամեն լիցուով:
Յայտարարում Վիեննայի համար. գնումում են
կարգանքի քաղված 2 կոպեկով:

ԲՈՎԱՆՊԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ. Հայոց թատրոն:
Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ.
Առաջին-Ունգարիա: Ֆրանսիա: Նամակ Ֆրանսիայից:
Նամակ Թիֆլիսից: — ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐՔԻՆ
— ՅԱՍՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՆԵՐՔԻՆ — ՖԵԼԻՍՏՈՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

Եթե ուղիղ է թե թատրոնը վարժող է,
ուր ուղղութիւնն ու կրթութիւնն է աւանդում
հասարակաց վարժն ու բարքը, ի՞նչ է ու-
րեմն հայ թատրոնը:

Յանդուգն դատողութիւն չի լինի ասել,
թե դա նախ այդ անուան արժանի չէ,
այսինքն՝ այդ անուն իւրը չէ. երկրորդ
նա ուղղութեան ու կրթութեան վարժող
չէ: Այս դատաստանից դուրս է այն օգուտ,
որ նա պատահական բերաններով տուեց.
Հայրը, այդ բնիկն ու վատագոյն հայր
Թիֆլիսում, հայ գերասանի համբաւէն
հրապուրեաւ, համարձակեցաւ, սիրտ ա-
րաւ, առանց կարմրելու ոտ ներս գնել այն-
տեղ, ուր հայերէն էր խօսվում, և առա-
ջին անգամ քաջութիւն ունեցաւ գովելու
հայ լեզուի ներդաշնակութիւնն և ընդու-
նակութիւնն, որ լսում էր մեր Բիւզանդեան
Հոսիոսի հիւրերի բերնէն, և ձկնում էր
նոցա արձակ ու համարձակ լեզուի տակ:

Ասում էի թե հայ թատրոն չը կայ, և
եղածը ուղղութեան ու կրթութեան վար-
ժող չէ, ջնդ կարծում թե այս խօսքերն
ապացուցութեան կարօտ լինին. բայց և
այնպէս, ցանկացողին ահա մի երկու կարծ
որ ուզէ և ասէ. — նախ, որովհետեւ այնտեղ
հայ կենք չը կայ, և երկրորդ, որովհետեւ
այնտեղ հայ կենքին նմանողն էլ չը կայ:
Ոչ հայն է տեսնվում բնիկ վրա (բացի գե-
-

րասանէն, որ իրրե արիւն՝ հայ է), և ոչ
հայի նմանը Միայն անթիւ ֆրանսիացիք —
Քաֆո, Մինար, և՛ ընկերութիւնն
(զարդի համար), և այդ բոլորն էլ իրենց
չափազանց անբնականութեան և յիմար չին-
ծութեան մէջ իրարից մաղի չափ տար-
բերութիւն չունին:

Ուղղութեանը զարդ, պատուելի Քաֆո-
նեքն իրենք, սաստիկ վրդովուած, արդելում
են որ մազամ Մինարներ չը համարձակին,
նոցա աղջիկների առջև, զանազան անբա-
րոյական բաներ պատմել (երեւի օթեակնե-
րում և անթուրի վրա նստող մատող
աղջիկների համար վտանգ չը կայ թե նոցա
կոյս մաքերն ու սրտեր պղտորելն այնպի-
սի պատմութիւններէ և տեսարաններէ):
Քաֆոն ու Մինարը խօ, վարք ու բարք ուղ-
ղող ու կրթող՝ ընտրովի և անմասն մար-
դիկ են. — երկու հայր, մի յանկարծ և
սխալմամբ լոյս ընկած ապօրինի որդու տէր,
մի որդու երկու հայր. երկուսն էլ երեմն,
հայրական գորովով սաստիկ յուզուած ժա-
մանակ, ուզում են մէկը միւսից խել ապօ-
րինիին հայր լինելու պատիւը, բայց դար-
ձեալ հաշտվում և փոխադարձ հաւանու-
թեամբ երկուսը մէկին հայր են դասնում
և — նորա փիճակը ապահովելուն հայրաբար
հոգ տանում:

Վերջապէս, — Քաֆո, — Մինար... (ձայնը
երթալով բարձրացաւ որքան կարող ևս,
տրաքուելու չափ, բայց ի սէր Աստուծոյ՝
առանց տրաքուելու)... — Մինար, — Քա-
ֆո...

Մինար. Գու ինչի՞ առում ես — վառ է:
Քաֆո. Որովհետեւ դու ասում ես — վառ է:
Մինար. Համաձայն եմ:

Քաֆո. Ուրեմն համաձայն ես:
Որքան լսեցի, բոլորը դժգոհ էին այդ
խաղի ընտրութեանէ: Մէկն ասում էր, սա-
տանէն զիտէ դա ինչ բան է: Միւսն ասում
էր, ես ոչինչ չեմ հասկանում: Երրորդն ա-

սում էր, խայտառակութիւն, եղբայր, խայ-
տառակութիւն: Մէկն էլ իւր խորին դժ-
գոհութիւնն ու արհամարհանք հրապա-
րակաւ յայտնեց, տակով թէ Բագրատի
բան է: Այդ խօսքի վրա ես, խոնարհ ծա-
ռայս, Բագրատի համար թուր քաշեցի
անդադարձնելով քննադատին, թէ Բագրատ-
իւնէն, իւր թուեղ երազումն անգամ, այդ-
պիսի բան մտքովն անցկացուցած չունի.
— երկու հոգի, Քաֆո ու Մինար, մի որդու
հայր, մանուկն ու երկուսն էլ համաձայն
հաւանութեամբ ընդունին՝ այդ բան... Ոչ,
բագրատիանցին ապուշ չէ: Ոչ էլ Քաֆո, Մի-
նար և ընկերութիւն (զարդի համար) կա-
րող էին այդքան ապուշ լինել. անշուշտ
հեղինակի ուղեղի զաղանիքն է այդպիսի
Քաֆո-Մինարների ծնող լինել:

Ի վերայ այս ամենայնի, մարդիկ քիչ ու
միջ ծիծաղեցան, պէտք չէ ուրանալ: Իսկ
և իսկ Հայի էլ ծիծաղելու ժամանակն է.
— Հայրենիքն արգէն վերականգնած է, իւր
եղբայրներ խաղաղութիւնն ու բարութիւնն
են վայելում. ամենայն ինչ կատարեալ է
վանում ու Մշում. Թիֆլիսում կարելի է
Քաֆոի հասուն աղջիկների ծրփծրփոցով ու
վրժվրժոցով ուրախանալ ու ծիծաղել և
նոցա այժման շարժումներով ու վերելքի
թուշտոցով և հպտանքով (minauderie)
գմայլել ու ուշաթափել: Հայրենիքն ասի-
րութիւնն, զինուորութիւնն, առաքինի և
բարեբաղդ լինելու այդ երեք յատկութիւն-
ներն էլ կարելի է Քաֆո-Մինարի և ընկե-
րութեան օրինակէն ուսանել: Քաֆո կատա-
րեալ հայրենասէր է (յուսով որ կը կարո-
ղանայ մինսոր դառնալ և իւր բամբակնե-
րի գին թանկացնել), սանդուղների մթի
մէջ և դռների ետեւ պահուող սիրամեղ
հոգսն ուրիշ կատարեալ զինուորութեան
ողի են արտաշնչում ու ներշնչում, իսկ ա-
պօրինի որդիներ գէս ու գէն ցանող ու մի

կատարեալ խորեայ ու կեղծաւոր ճերանս
անձնութեան տիպար է: Այդ օրինակ-
ներով կազմութեան ու ոգևորելով, թիֆ-
լիսի հայն կերթայ անշուշտ ու կը
փրկէ իւր եղբայրներ քրդի ու չէրքէզի
զերութենէն:

Ներքին է արդեօք եղբայրակիլ, ասելով,
թե այդպիսի մի թատրոն՝ հայ չէ, և հա-
յութեան չէ ծառայում: Եթէ այնտեղ գե-
ղի համար դանձում է և մի լաւ բան, դա
ոչ թէ քննութեան, նախատեսութեան, և
որոշ յատակագծի արգասիք է, այլ՝ մի բաղ-
դատը պատահանքի:

Վերե ներքեւ, բաւական տեղեր կային
գատարի, չը նայելով որ ներկայացումը յո-
գուտ մի շատ արժանաւոր գերասանի էր:
Իրրե բնծայ, մի պատկ և երկու երեք հատ
ողորմելի, արտուած փունջեր, այդ մարդու
համար բոլորովն անպէտ: Այո՛, նաեւ մի
քանի տալ ոտանաւոր, տանն՝ ոսկի, միտքն՝
օղաբանութիւն:

Թատրոնի ծախքը մի քանի երկասարգներ
տեսան. այնպէս որ դրամարկիւնքն ամբող-
ջապէս կը մնար Պ. Միսիկեանին:

Գերասանի վերադարձը գէպի իւր աղ-
քատիկ սենեակը խաւար ու խոնարհ էր.
ոչ լոյս, ոչ ծառածայն, ոչ գուռուկ:

Ա. Մ. Ե. Պ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Լսում ենք որ Ներքինեան զարդի գանձա-
րանից պակասել է 3000 ռուբլ: Յանկալի է որ
այդ լուրը հերքվել և հերքումը, ի հարկէ, լի-
նէր ոչ թէ լոկ խօսքերով, այլ հաստատ փաս-
տերի վրա հիմնված, որովհետեւ այդ լուրը ահա
մի քանի օր է տարածվելով քաղաքի մէջ, բա-
ւական տարակուսանք է պատճառում Թիֆլիսի
հայ հասարակութեանը:

Ուստ քաղիրները հաստատում են որ Թիֆլի-

ՖԵԼԻՍՏՈՆ

Ի՞նչ սարսափելի դժուար բան է եղել Ֆելիստո-
սոնիստ լինելը:

Նիւթ չը կայ որ մարդ կարողանայ մի բան
գրել: Թէպէտ նիւթերը անապառելի են, բայց
լաւագործը այն է, որ պէտք է ընտրել երկու
չարեայ փոքրագոյնը, այսինքն՝ նիւթերի յար-
մարագոյնը, կամ լաւ ես՝ այնպիսի մի նիւթի
վրա պէտք է խօսել, որ ոչ ոք չը վիրաւորի,
ինչպէս թրքական առածը ասում է շնէ չի:
Եւստիս նէ քեապպա՝ որ նշանակում է — ոչ
չամփուրը այրվի և ոչ խորովածը:

Այժմ ընկերացողները կասեն թէ, այս կըրօն է,
Բաֆֆի լիւնթիւնն մէջ պոլսեցի Թովմաս Էֆէն-
դու նման առանց առածի չէ խօսում, իսկ ես
կը պատասխանեմ թէ Թովմաս Էֆէնդին միայն
լիւն առածներով էր խօսում, վասն զի ինքն էլ
լիւն ծնունդ էր, մինչդեռ ես ամեն տեսակ կին-
դանեայ և մարդկերանց համար անապառելի ա-
ռածներ և անէկրօսներ ունեմ, բայց խնայողու-
թիւն անելով՝ չը վատնեմ: Հարկադրված եմ,
որովհետեւ մի օր ի լոյս ընծայեալ մազկիւր եմ,
մանաւանդ Նասրադին մօլլայի դեռ չը լաված
ընտիր անէկրօսները, որոնք գուրկ չեն բարո-
յական դասերից:

Հիմայ դառնանք մեր նիւթի խնդրոյն: Չը գի-
տեմ, ինչ բանի վրա գրեմ. եթէ խելքիս վրածը
գրեմ, պիտի ասեն թէ Էլբան չողերից խնթե-
ցել է, եթէ ամեն բանի ճշմարտը գրելու յան-
դգնիմ, Թիֆլիսից չուտով պէտք է փախչեմ, որ
ընաւ իմ հաշտվել չը գար, որովհետեւ քիչ շատ
տեղական բարբառին վարժվեցայ, վարք ու
բարքին տեղեկացայ, զանազան սովորութիւննե-
րի ծանօթացայ, և բանը այն ստորիճանին հաղ-
թի, որ ես ես սկսայ պօլսեցիներին չը հաւանել.
Հատ անգամ ասում եմ լիւն, Աստուած սիրեւ,
զրանք հոսոսներ են: Կարծես թէ ես հոսոս
չեմ. բայց ճշմարտն ասած, ես ինքս զգում եմ
որ այլ ես հոսոս չեմ, այսինքն ոչ հոսոս եմ,
ոչ Թիֆլիսեցի, այլ մի տարօրինակ խառնուրդ,
մի նոր սերունդ՝ անպատճառ ինձ մի ուրիշ ա-
ծական պէտք է տալ: Բացի սորանից կարծես
թէ աղգասիրութիւնն էլ աւելացաւ, ես զգում
եմ իմ մէջ մի ծանրութիւն, երեւում է որ գնա-
լով գնալով աղգասէր եմ դառնում. եթէ այս
կերպով շարունակվի, աղգասիրութեամբ այն
ստորիճան պիտի ծանրանամ, որ այդ բեռիցը
թեթեւացու համար աղգասէր չեղողներին պիտի
բաժանեմ. դժբաղդարար Թիֆլիսում էլ աղգա-
սէր չեղող ոչ ոք չը կայ, ամենքը ջերմ, կրա-
կուր, վառվառն հայրենասէրներ են և պօլսեցի-
ների նման հոսոս չեն, այսինքն՝ տակը փոս,
վրան փիլիպպոս չեն, որ նշանակում է ներքուստ
չահասէր, արտաքուստ աղգասէր, իսկ Թիֆլիսի

երկասարգութիւնը ընդհակառակը արտաքուստ
չահասէր և ներքուստ աղգասէր է, և տարափե-
լի կրակավառ է, այնպէս որ մի քաջ հեռուից
մարդ կարող է պապիթօսը վառել:

Բայց ես դարձեալ հեռացայ Ֆելիստոնիստի
պաշտօնից: Ուզում էի ասել որ Թիֆլիս համա-
կրելի քաղաք է, չեմ ուզում հեռանալ, սակայն
միմիայն Թիֆլիս մնայով մարդ չէ կարող փողոց-
ների փաշին կուլ տալով ապրել. պէտք է մի
բան անել, մի բանով պարտաւել: Որինակի
համար կամ վաճառական, կամ գործակաւար,
կամ միլիտան, կամ խմբագիր (ձրի կարգացե-
լու համար), կամ ինտելեկտիւ, կամ ուսուցիչ,
կամ տեսուչ, կամ քահանայ (ամենից հեշտը),
կամ հրդեհի ապահովութեան պէտք (ամենից
համը), կամ լուսանկար (բացի աւերակներից),
կամ դերասան, կամ դերասանուհի, կամ պիէսա
թարգմանող (Աստուած կարողութիւն ապ), կամ
բժիշկ (փողի հիւանդութեան օգուտ չունի), կամ
փաստաբան (այժմ ամեն մարդ իրաւաբան է),
կամ Էփիմանայ միաբան (մեղայ Աստուծոյ, Աս-
տուած թողութիւն չորհնացէ), կամ... ես ինչ
գիտեմ, վերջապէս մի բան պէտք է լինել, ես
էլ ճարահատեալ որոշեցի Ֆելիստոնիստ լինել:
Բայց ում մտքիցը կանցնէր որ սա դժուար մի
ձեռնարկութիւն է եղել: Նիւթ պտուելու համար
չը գիտեմ ո՞ր գնամ, կ'իմը կորուսած ամուսնոյ
նման փողոցներում ման եմ գալիս նիւթ ճարե-
լու համար: Հայերի կ'ուրը գնամ, — ուսներէն չը

գիտեմ որ հասկանամ՝ ինչ խօսում են: Զարմա-
նալի բան է, այնքան զգում զլուսն չեմ, որ մի
լեզու չը կարողանամ սովորել, բայց և այնպէս
անկարելի եղաւ ինձ երկու տարեկան մէջ գոնեայ
ուսներէն հարկը բառ անգիր անել և խօսել:
Այսօր մի բառ սովորում եմ, Էգուց մուտնում
եմ, կամ նոյն բառի նման մի ուրիշ բառ եմ ար-
տաւանում, այնպէս որ մի խայտառակ բան է
զուրս գալիս: Իսկ ամանց տուները այցելելու
համար վրացերէնը ընաւ չը գիտեմ, մինչդեռ տե-
ղացիք այս ամենասարսափելի դժուար լեզուն
շատ շուտ են սովորում առանց խնդրելու. ու-
րովհետեւ ես վրացերէն մի քանի բառ արտասա-
նել փորձեցի, երեք օր կոկորդս ցաւեց, այս հա-
շտով եթէ լեզուն ամբողջապէս սովորել ուղե-
նամ, զիֆտերիտի հիւանդութիւնից պէտք է մեռ-
նեմ: Սակայն ամենքը ինձ նման չեն, օրի-
նակ, Թիֆլիս նոր եկած և մեծ ու պատիկ 17
հոգիէ բաղկացած մի հայ ընտանիք՝ հայերէն
չը գիտցող մի վրացի ծառայ են վարձել, ծառայ
հայերէն սովորել չէ ուղեցել: 17 հոգի երեք
չորս ամսվայ մէջ աշխատել և վրացերէն են
սովորել ծառային հետ վրացերէն խօսելու հա-
մար: Այ, աղգասիրութիւն, այսպէս է հարկաւոր
որ հայկական հարցը չուտով լուծվի:

Ռուսերէն լեզուն մէջ ունեցած ոյժս զգում
եմ երբ ճաշարանները յաճախում եմ, ես ինքս
էլ հաւանում եմ յառաջադիմութեան, համարեա
բոլոր կերակուրների անունները ուսներէն գի-